

File

Թիւ 26946  
Յուլիս 16, 1980

Մեծայարգ  
Տիար Սարգիս Չիլինկիրեան  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ժխական Խորհուրդի Փոխ Ատենապետ  
Թորոնթօ.

Յարգելի Տիար Չիլինկիրեան,

Թեմական Խորհուրդի Յուլիս 12 նիստին մէջ նկատի առինք ձեր  
եւ ատենադպիր Տիար Հրաչ Շիշմանեանի ստորագրութեամբ մեզի ուղղու-  
ած Յունիս 29, 1980 թուակիր նամակը, որով ժխական Խորհուրդը  
կը խնդրէր որ Թեմական Խորհուրդը վերանկատէր իր որոշումը եւ  
արտօնէր նոր հողի գնումը, համաձայն Թորոնթոյի Ս. Երրորդութիւն  
Եկեղեցւոյ ժխական օրդովի մէջ առնուած որոշումին:

Հաճեցէք ժխական Խորհուրդիդ կողմէ նշանակել ներկայացուցիչ-  
ներ՝ որոնք Թեմական Խորհուրդի նիստին ներկայանան, խորհրդակցե-  
լու համար վերոյիշեալ հարցի կապակցութեամբ: Թեմական Խորհուրդի  
յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Ուրբաթ Օգոստոս 22ին՝ Առաջնոր-  
դարանիս մէջ: Ձեր ներկայացուցիչները թող քարի ըլլան Առաջնորդա-  
րան գտնուիլ Ուրբաթ յետ միջօրէի ժամը 4.00էն 4.30:

Այս առթիւ կը փափարինք ձեզի յիշեցնել թէ պատշաճութեան հակա-  
ռակ է Առաջնորդին ուղղուած նամակի մը օրինակները դրկել ոեւէ  
ուրիշ անձի:

Ժխական Խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք քաջաոողջութիւն  
եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԼԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ